


Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յ Ա Ռ Ա Ջ



Ա Ռ Ա Ջ զրինք մեր խմբագրականին վերնագիրը. որուն համար է այդ մագական խրատու. սիչ բառը, անշուշտ մեզի համար. բայց մենք կարելի է որ այդ հոգի ե շունչ փչող վերնագրին հետևող ըլլանք. յառաջ կ'ըսենք, բայց կ'ըմբռնենք որ մեր քայլերն կաշկանդուած են, կ'ըմբռնենք որ մեր ճակատագիրը ուրիշ բաներ կ'որոտայ, մահ, կորուստ, ջնջումն: Թող սաստկանան, թող տարածուին այդ որոտումներ. ասոնք մեր անտարբերութեան ուղիքներն մէջ պիտի թափեն իրենց ամուլ շանթերը, եթէ ըմբռնենք որ սխուր ճակատագրի ընդդիմադիր՝ հինաւորաց ազգի մը զաւակներ ենք ե մեր սրբազան պարտքն է սուկուն, գեբընական յա-

րատեութեամբ կոուիլ, միշտ կոուիլ այդ մահահոտ ճակատագրի դէմ:

*

Անցեալ տարի այս օր սկսանք կենքի նոր շրջան մը, որուն անդրանիկ բոլորակը բոլորուած է. զարձեալ աշտարակներու կողմէն իրենք տարածելով իրենց հնչական զանգիւնը, գուցէին անցելոյն թաղումը ե ողջունեցին նորածագ արփենին, որուն վրայ սեւեռած են մարգկութեան թերահաւատ աչքերը... գուցէ քանիներ յոյսի պատրանքէն մագնիսացած, նոյն դեռատի Արփենիէն երջանութիւններ կ'երազեն. ե քանիներ անյուսութեան ճիւղներէն ձերբակալուած՝ սեւ, սգաւոր ե դաժան կը տեսնեն անոր ծածագկոտ դէմքը... Բայց մենք ոչ յոյսի միամիտ երիտասարդներ, ե ոչ ալ անյուսութեան մատնուած ծերեր պէտք ենք ըլլալ...

Այս օր շրժունքներ կը թրթռան, սրտեր՝ սրտերու կը քնարեբան

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ...

Այժմ շնորհաւոր ըլլայ մեզ ամենու համար. բայց այդ թուականային մաղթանքներէն առաջ, մենք ուրիշ պարտականութիւն մ'ունինք. այսօր մեզմէ կը պահանջուի անցեալ շրջանի հաշիւը, աշակերտը ե ուսուցիչը, հպա-

տակը և առաջնորդը, ժողովուրդը և իրեն մեծ գաստիարակ լրագրութիւնը, այս ամէն գասակարգ պէտք է ցոյց տան թէ իրենց պարտքին մէջ ո՛րքան հաստարիւմ մնացեր են :

Ռուսացիի և աշակերտի, առաջնորդի և հաստակի պատասխանատուութիւնները կրթական և ընկերական հաստատութեանց ներքին խնդիրներ են, որ պէտք են յուզուիլ իրարու մէջ. իսկ մեզ կը մնայ ցոյց տալ թէ ժողովուրդը և իրեն հետ մեծ յարաբերութիւն ունեցող լրագրութիւնը՝ յառաջագէ՛մ, թէ յետագէ՛մ շրջան մը բուրեց :

*

Ժողովուրդը կամ հասարակութիւնը և մամուլը կամ լրագրութիւնը ազգիկ ամբողջութեան ներկայացուցիչներն են, ի՞նչ է առնոց միամեայ ժամանակի մէջ կատարածն :

Թիջեւ անուրանալի ճշմարտութիւն մ'է հայ գրականութեան ներկայ անկումը, սակայն նոյնպէս անսխտելի իրականութիւն մ'է մի քանի լուսամիտ լրագրաց տարածման զգալի օգուտն : Կէն դար առաջ, մեր հասարակութիւնը ընթերցող չէր, այլ մի սոսկական արհեստաւոր, մշակ, վաճառական տարր. ընթերցանութիւնը վարժապետի, աշակերտի, տիրացուի և եկեղեցական գառակարգի մենաշնորհն էր. ընթերցողը որ ամենէն բանագէտն կը համարուէր, այն էր ժողովրդեան պատգամախօսն, մտքի զինավարն. հասարակ ժողովուրդը ընկերական կամ քաղաքական և կամ ուսումնական խնդրոց մէջ, կարկամեալ կզակ մ'ունէր, նա կարող չէր իր բանաւորութեան յատկութիւնները, դատողութիւնը և գաղափարները ազատօրէն յայտնելու, մասամբ մը անոր բանաւորութիւնը բանտարկուած էր. մամուլի թուոցիկ թերթերը, անոր ազատարարները եղան. ցոյց տուին որ քաղաքականութիւնը, յառաջդիմութիւնը, բարեշրջումը կարելի է ձեռք բերել մամուլի շնորհիւ. լրագրաց բազմանալովը և տարածուելովը, ժողովուրդը յամբօրէն սկսաւ զգալ իր անձին պարտքը, բանաւոր էակին գեղեցիկ յատկութիւնները, իրաւունքի աղարարացի պահանջները, խրաքանչիւր ընթերցող անհատ՝ սկսաւ ըմբռնել

անտարբերութեան մեռելովիւնը, խաւարի թշնամութիւնը, մոլեռնագութեան լծոյնը, լուսաւորութեան մոգիչ, ուժը, գիտութեան կենդանարար ազդեցութիւնը : Եւ 1901 թուականի մէջ տեղի ունեցած հանդիսաւոր ստանախմբութեանց ցոյցերը, շոշափիլի վկայներ եղան լուսամիտ լրագրութեան բարեկարգիչ գովելի ծառայութեան : Արժուին Գրիգոր՝ իր առաջին խմբագրականով, կը փողէր որ հայուն գործը պիտի ըլլայ լոյս, գիտութիւն և աշխատանք : Մեծ խմբագիրը լուրջ գրագէտներէն յարգուեցաւ, և իրեն հետեւողներ ունեցաւ. իր հաստատած անխառնական լրագրութիւնը՝ իր հետեւող պարանեականերով, ազգային բարքերը յեղաշրջեցին : Եւ իբրեւ աղբիւնց ալք ազատամիտ լրագրութեան, կը յիշենք հետեւեալ միւլթարական ցոյցերը :

Հանգուցեալ տարուան մէջ, ամենէն մեծ տօնն էր Մխիթարայ Հիմնարկած Սիւրբանութեան երկհարիւրամեայ գործունէութեան յորելեան հանդէսը, որ մեր ժողովրդեան և գրագէտ դասակարգի բարուց փորձաքարն եղաւ : Չննք կարծիք որ անիրաւած կ'ըլլանք, եթէ ըսենք որ այս յորելեանը լրակական խաւարամիտ և ամուլ տարիներու մէջ եթէ պատահէր, դուցէ աւելի նախանձի կրքեր շարժէր, քան թէ երախտագիտութեան ներդաշնակ բամբն փողէր : Լրագրութեան յառաջագէ՛մ գունդը կրօնական անխորուլթեան պաշտպան ըլլալով, և ցոյց տալով գրական ծառայութեան բնութիւնը, յաշնդիցեալ պակեւելու մեծին Մխիթարայ հաստատութիւնը, որուն երկու դարու մէջ կատարած գործն եղաւ համերաշխութիւն քարոզել և գիտութիւն ծաւալել. և ուխտիս Նրանաշնորհ հեղինակն, ամպբուր մէջէն բերկրեցաւ՝ տեռնելով ամբողջ ազգութեան մէջ իր ներշնչած գաղափարի ծաւալումը : Ազգային կրօնքի, և լրագրութեան ու գրականութեան ամենէն պատկառելի և մեծ ներկայացուցիչները պատուելով Միաբանութեան յորելեան հանդէսը, ցոյց տուին մեր ազգին դէպ ի յառաջդիմութիւն առած քայլերն, ժողովուրդը լսելով յառաջագէ՛մ լրագրութեան անխորուլթեան քարոզները՝ վե-

րին աստիճանի աղնիւ շարժելով, ցոյց տուաւ իր Ասիական բարբերութեան բարեշրջումը. և եթէ նոյն Հանդիսի առթիւ ոմանք կամայօտար և ի գայթակղութիւն ուսմկին, ոչ աղնիւ և ոչ ալ Հնարակի շշուկ բողոքներ բարձրացուցին, զա՛ռ ոչ հանրական, այլ անհատական կրքերու գաղափարական արգահատելի կրիւ մ'էր։

Ժողովրդեան երախտագիտութեան ապագայը մ'էր նաեւ, թրքահայ վարժապետի մը փարձապետական գործունէութեան յորելեան հանդէսը։ Ազգին զաւակները, իրենց նուէրներով ցոյց տուին որ երախտագէտ են իրենց դաստիարակներուն. լրագիրները նոյն յորելեանին առթիւ՝ առ յորելեարն համակրական տողեր նուիրելով, ուզեցին ցոյց տալ արպիւնտուր վարժապետները յարգելու պատշաճութիւնը։

Մի քանի տարի Գ. Ջանշեան, գերազանց աշխատութեամբ՝ ազգային ծնողազգուրկ որբերուն ամենէն մեծ բարերարն եղաւ. ազգը շուտով ճանցաւ անոր արժանիքը. և այս տարի երբ լրացաւ իր մահուան տարեւ դարձը, ամէն կողմ մեր բնիկ և գաղթական հասարակութեան մէջ, անոր հոգւոյն հոգեհանգիստ կատարուեցաւ։ Սա եւս ապացոյց մ'էր մեր ժողովրդեան երախտեման նաչ լինելուն։ Դեռ մօտ օրերս կարնայ մէջ սասանութիւնք աւերելով և կործանելով տեղացի ազգայնոց և օտարազգի հասարակութեան ընտանեացիներն, Կ. Պոլսոյ մեր ժողովուրդը բաւական ստակ հաւաքելով, օգնութեան հասաւ ձեան տակ բացօթեայ սարսողը քաղցած եկբայներուն. զա եւս ցոյց կու տար որ ներկայ մեր ժողովուրդը՝ մեղքաւորին թշուառութեան կարեկցելու պատրաստական սիրտ մ'ունի և անտարբեր մնալու դատապարտութենէն կ'ուզէ խոյս առալ։

Հանգեաւ Հ. Ալիշան, ամբողջ ազգութիւնը իր անկեղծ արտասուքը թափեց. մեր զառն վշտին վշտակից և մխիթարիչ եղաւ յուզիչ հեռագիրներով, նամակներով և լրագրական գնահատելի յօդուածներով։

Այս մի քանի պարտաճանաչ երախտագիտական օրինակներուն կցեմք նաեւ հետեւեալն։

Արտասահմանի գործիչները՝ միութեան գաղափար մը յուզելով, և ուսանողաց մեծ մասը՝ արդէն իսկ համերաշխ գործունէութեան ձեռք գարկած ըլլալով, ուզեցին ապացուցանել, որ ազգին վրայ բռնացած Հին ախտը՝ անմիաբանութիւնը, լուծուելու միջոցաւ կան և խիստ ցանկալի վտանգի մէջն է։

Եւ ժողովրդեան այս ամէն խրախուսիչ բարեխաղութիւնները, զոր տեսանք 1901ի շրջանին մէջ, կարելի է համարել յառաջադիմական փոքր շարժում մը, որ պիտի շարունակուի լրագրութեան կիրթ ու ազգուքալելներով։

✱

Լրագրութիւն. — Ինչ եղաւ ասոր վիճակը. մենք տեսանք անման, բազմաշաւա խիստ չափազանց աշխույժ մը. մենք մի դեռաբողբոջ լրագիր կամ հանդէս սիրով պիտի ողջունէինք, եթէ նա նախորդներու կատարած ծառայութենէն տարբեր առաւելութիւն մը ցոյց տար։

Ժողովուրդը լրագրութեան միջոցով զարգացնելու գաղափարը և գործը խիստ դուռնալի կը գտնանք, լաւ է լրագրաց բազմութիւնը, պայմանաւ որ անոնց վարիչներու նպատակն ըլլայ ազգին սիրելի ընել գիտութիւնը, հասարակութեան օգուտը, յառաջադիմութիւնը և քաղաքականութիւնը. օտակայն կը ցաւինք բնելու որ մեր ներկայ այս հեռուէն լրագրական հարստութեան մէջ, խիստ գոռաւորին է գտնել նորածին մի քանի խմբագրական մարմիններ, որոնց աշխատակիցները իրենց ընթերցողաց պատկառանք ազգին և շինիչ ու բարեկարգիչ ապաւորութիւն մը թողուն։ Իրօք ցաւալի է որ մեր նորափետուր լրագրաց շատերը տակաւին իրենց երախտական աստիճանէն դուրս չեն ելած. և այս ցաւալի իրողութեան պատճառ կարելի է համարել վարժ գրագէտներու պատալիքութիւնը, որով մեր լրագրութիւնը աշակերտ կը մնայ, վասն զի անշնան բացառութեամբ՝ զայն վարողներն են գրեթէ միշտ միջակ կրթութիւն և ուսումն առած ընթացաւարտ աշակերտներն, որոնք թէ և յօդած ու մշաւած մտքեր չեն, այլ թաւալ, հեռանկուն, գրեւոր տենցէն բորբոքուած, սակայն գրչի անվարժութեան մէջ ուզելով խրոխտ վարժութիւն

մը կեղծել, կը նսեմացնեն կը վստանան թէ՛ իրենց ապագան և թէ իրենց վարած թերթը:

Հակակիրներ չենք լրագրական անման և ծաւալման. սակայն՝ եթէ նորածին լրագիրն ժողովրդեան փոխանակ կազդուրիչ և լուսաւոր գաղափարներ ներշնչելու, անձնական կամ կուտակցական խաւարմիտ անհանգուրծելի կոիւններու գործիք ըլլայ, լուսագոյն է որ այն լրագրական նոր աստղը խաւարի մէջ ընդ միշտ թաղուած մնայ: Ժողովրդեան օգտակար թերթեր (թէն քիչ) պակտ չեն . . .

*

Անցեալ տարուան՝ լրագրական աշխդիրն հետ զգալի էր մամուլի հրատարակչական զանդաղութիւնը. կարելի է ըսել որ տպարաններու մէջ մեծելութիւնը կ'անի, սակայն ինչ է պատճառը, անտարակոյս զարձեւալ սովորական ողբերգն պիտի լուծի, որ մեր ժողովուրդը ընթերցող չէ, չի գիտեր գրեւորու յարգը, չի գիտեր հեղինակները քաջալերել, վաճառականութեան և մշակութեան մասնաւոր է, և այլն: Բայց սա ընդունիլն զրպարտութիւն մ'է, մենք ներկայ յօդուածովս, մեր հասարակութեան կոյր ջատագով մը ըլլալու ո՞նէ նպատակ մը չունինք. սակայն և ի յարգանս մամուլի՝ չենք ուզեր այդ ունակութիւն դարձած գանգաւսին առջեւ լուծիլն պահել:

Հաշուենք թէ մեր տպարանները ի՞նչ գրքեր հրատարակեցին: Ամբողջ տարուան մէջ, հայ մամուլը տուած է հինգ վեց դասագիրք, մի քանի վիպասանական թարգմանութիւններ, տասնեակ մը օրացոյցներ, և նոյնքան ալ կրթարաններու տեղեկագիրքներ. յիշատակելու արժանաւոր երկ մը գտնելու կը դժուարինք. եթէ կայ մի գովելի աշխատութիւն, զառուսահայ գրագէտ Պ. Փափազեանի «Վրասի» անուն խմբագրական գեղեցիկ գործն է, ուր ներկայ ամենէն ծանօթ և կէս ծանօթ, ձեռնհաս և անձեռնհաս, լուրջ և թեթեւամիտ գրագէտներն, զետեղած են իրենց մտքին լուսման: Զենք ուզեր յիշատակել այն տետրակները, որոնք հանդէսներէ հանուած՝ իրբեւ առանձին գրքեր լոյս

տեսան. ասոնք լրագրութեան բեկորներ են, և ալպիսի աշխատութիւններ՝ մեզ համար լրագրական յօդուածներ են: Կարող ենք ըսել, որ մեր տպարանական գործը, ոչ միայն չնացեալ է, այլ զգալի կերպով կը յետադիմէ, և եթէ ամէն մի տպարանագետ ըմբռնէր ժողովրդեան պահանջը և պէտքը, և ըստ այնմ հրատարակէր կարեւոր երկատիրութիւններ ու թարգմանութիւններ, տարակոյս չի կայ որ թէ՛ հրատարակիչն և թէ՛ հեղինակն պիտի վարձատրուէր. ժողովուրդը թեթեւ վէպերու, տիրացուական օրացոյցներու, և անպէտ տեղեկագիրքներու համար քրախնդով վատակած դրամը չի մոխիր: Մինք տանք անոր մտքին և բարքին կրթիչ հրահանգիչ գործեր. հրատարակենք ժողովրդեան հասկանալի լեզուով և ոճով երկրագործութեան, արհեստի և տնական բժշկութեան վերաբերեալ ամենեղէն գրքեր, վստահ ըլլանք, որ ժողովուրդը կը վարձատրէ իւրաքանչիւր հեղինակները: մեզ թող օրինակ ըլլայ «Մի խմիր» անուամբ Պ. Վ. Արծրունի բժշկագետն այս տարուան հրատարակած գործը, որ երկու ամուսնի մէջ յափշտակուեցաւ, և երկրորդ տպագրութիւնն ալ շուտով լոյս տեսաւ. առ այժմ ժողովուրդը այդ ոճով գրքերու կը կարօտի: Ամիսներ առաջ մենք մի խմբագրականով ցոյց տուինք թէ ի՞նչ կենսական մեծամեծ հրատարակութեանց կարօտ ենք. կը ցուինք ըսելու որ այդ տեսակ գործ մը սկսելու գաղափարն ոչ միայն ընդունելի չեղաւ, այլ նոյն իսկ անոնցմէ աւելի համեստ և դիւրին գործերն ալ իրպատ ջնջուեցան մեր բանասերներու գրասեղաններէն. այժմ սկսաւ իշխել հրատարակչական մեծելութիւն, անդործութիւն, և ձաղկելի անտարբերութիւն:

Բայց ներկայ ոչ մի գեղափոխիչ գրագէտ, ոչ մի դեռատի հրապարակալի, պիտի ընդունի մեր գրական անկման և յետադիմութեան ճշմարտութիւնը. այլպիսիներու խիստ լաւ կը յարմարի Ալֆիերիի հոչակաւոր իտալ մատենագիր հետեւեալ գեղեցիկ բացատրութիւնը.

Ա՛հն բան կ'ընեն, և բան մ'ալ չեն գիտեր
Ա՛հն բան գիտեն և բան մ'ալ չեն ընեն:..

Նոր դարը աւելի լուրջ գործունէութեամբ
պէտք էինք սկսիլ: Ներկայ ամէն մի թարմ
գրասէր ու բանասէր միտք, պէտք է բմբռնել,
որ հանգուցեալ դարու մէջ նախորդ գրական
ներկայացուցիչները ազգին մտաւորական մեծ
զարկ մը տուին, զոր հասուցին մինչեւ մեր
օրերը . այժմեան գրական դասակարգի
պարտքն է յառաջ վարել այն մտաւորական
մեծ բարեշրջումը, որուն զիւցազներն եղան
Արուիան, Նազարեան, Նալբանդեան, Պե-
շիկթաշեան, Դուրեան, Գամառ-Քաթիպա,
Բաֆֆի, Երեմիայ, Արծրունի, Էմին, Պատ-
կանեան և այս հանճարներու կատարելու-
թիւնն է. Ալիշան . . .

Ասոնք չկան այլ եւս:

Նոր դարը նոր գրագէտներու յանձնուած
է. հին գարու գրական մեծ հանճարները և
գործիչները նորերուն օրինակ ըլլալով, պէտք
է նոր և աւելի կատարեալ յառաջգիտական
գործի ձեռք գործնել. եթէ ազգային յեղա-
շրջեալ հսկայաբայլ գործը յառաջ չբերուի,
կա նոր գրագէտներու անհարակտութեան, ան-
տարբերութեան, մեղկութեան և ծուլութեան
վերագրելու է. ազգային նոր ու ճոխ գրա-
կան հոյակապ չենք, պէտք է պահպանել
Հեանելիք հին հանճարներու ուղղութեան.
Հինները ինքնաբոյս գրագացում մը չեն ու-
նեցած, այլ դիմեր են Եւրոպիոյ համալսա-
րանները, հոն ամբարներ են մտաւորական
մեծ պաշար մը և բոլոր այնոք մտեր են գրա-
կան գործի ասպարէզը: Ասոնք մի միայն
համալսարանական կրթութեամբ չեն բուա-
կանացած, այլ իրենց ամբողջ կենաց մէջ
Եւրոպայի ամենէն փայլուն հանճարները,
իրենց գրչին առաջնորդ ընտրեր են, և ա-
նոցն հետեւողութեամբ՝ նոր, սթաիկացիչ,
յեղաշրջող ազգային լրագրութիւն մը, վի-
պագրութիւն, թերթողական արհեստ, և կըր-
թական գործ մը սկսեր և յառաջ վարեր
են քաջութեամբ: Անցեալ դարու գրական
փարուններ՝ հինցած, ծանօթ և բիւր անգամ
որոճուած հայկական բնիկ մասնագրու-
թեամբ չուզեցին գոհանալ, անսնցմէ օմանք՝
հին գրականութեան վրայ գրադելը բոլորու-
վին անպէտ համարեցին, այլք նոյնը մշա-

կեցին քննական լուրջ ուսումնասիրութեամբ:
Արուիան, Նազարեանց, Ժողովրդական լեզուի
և գրականութեան Մեսրոպները եղան. Ար-
րունին հասարակութեան մտաւոր գերութեան
շղթան փշրեց. Էմին և Պատկանեան բա-
նասիրական գիտնական քննութեանց առհ-
միրները եղան. և Նազապետի համաստե-
ղութեան մէջ փայլիլած գուսաններն Գա-
մառ-Քաթիպա, Պէշիկթաշեան և Դուրեան
կազմեցին և հնչեցին Պառնասական բոցա-
շունչ և հոգեշունչ, սիրաշարժ և սրտաշարժ
երգերն. Ռաֆֆի և Երեմիայ ստեղծեցին վի-
պախառն հայ պատմութիւնը, որ ժամանա-
կակից երիտասարդութեան սթաիկութեան
շեփոք մ'եղաւ: Եւ այս ամէն վարպետ գրիչ-
ներու վարժապետներն, ուսուցիչներն ու ա-
ռաջնորդներն եղան Շիրէր, Կեթիք, Պուշ-
կին, Լեւոնտոֆ, Պայրոն, Հայնէ, Շէք-
սպիր, Պէրանժէ, Պոկլ, Լամբրդին, Վալ-
զէր Սկոտ, Էօմէն Սիւ, և այլն:

Ձեռք կարող ըսել որ մեր ներկայ սե-
րունքը յիշեալ կորուլամիտ հայ հանճարներու
այլասերած բթամիտ զաւակներն ըլլայ. ոչ,
մենք կ'ընդունինք որ ներկայիս կան ոչ սա-
կաւ ընդունակ և կարող մտքեր, ուսեալ և
գիտուն ու հասուն երիտասարդներ, որոնք
կարող են անցեալ դարու հայ մտքի լուսա-
ւորիչներու զառն կորուստները քաղցրացը-
նել՝ շարունակելով այն գործը որ արդէն
սկսեր են. կը մնայ յարատեւութիւն, յամու
աշխատանք, զուտ ազգասիրութիւն: Անցեալ
դարու գրական յեղափոխիչները աստուա-
ծային հրաշալիքներ չէին, այլ մեղի պէս օտ-
կական ազգին զաւակներ, հայրենի հողին
ծնունդ, անուր և երկրագործ ծնողներու
սերունդ, թանձր խաւարի մէջէն դուրս ցատ-
կած և լոյսի փարած անհատներ. անոնց
ձեռք բերած մտքի մշակութիւնը այժմ շատ
աւելի նուազ աշխատութեամբ կարելի է ստա-
նալ. ամէն տեսակ միջոցներ անպակաս են:
Երբ նոր երիտասարդութիւնը իր անձնական
ապրուստին համար, տասնեակ տարիներ հա-
մալսարաններու մէջ կը կարողանայ ապրիլ
և մասնաձեւի մը տէր կ'ըլլայ, նոյն երե-
տասարդներէն ամենէն աւելի ընդունակներն
կրնան հին համալսարանական Արուիան,

ներու, Նաղարեանցներու, Պատկանեաննե-
րու և այլ մեծ հանճարներու պաշտելի և
պատուելի գործին հետեւել: Մինչ յուսով
ենք որ սկսնակ դարու պատկանող և նոր
գրական մտքեր ընդունուած Շիրվանդադէ,
Լէօ, Ա. Ահարոնեան, Վ. Փափազեան, Ա.
Խաչակեան, Լեւոնց, Ա. Մատուրեան, Թ.
Յովհաննիսեան, և այլ մի քանի ոչ անշաշն
վիպագիրներ, բանաստեղծներ, գրապէսներ,
եթէ իրենց գրելը անգործութեան չի գատա-
պարտեն, նորածին գարը պիտի չի կոչուի մեր
գրականութեան անկենդանութեան յետադի-
մութեան և անկման գար:

Քանի որ մեր ներկայ հասարակութեան
մէջ մտած է ընթերցասիրութիւնը, քանի որ
ազգը ի վիճակի է պահել ու ապրեցնել
խումբ մը և նոյն իսկ քան զչափն աւելի
բազմաթիւ խեղճ ողորմելի թուցիկ թերթներ,
յուսալի է որ նոյն ազգը ալ աւելի եռանդով
պիտի վարձաւարէ իր մտաւարականին վարժ-
ու ճարտար մշակները, քերթողները և պատ-
միչները:

Յառջ ուրեմն...

Incipit Vita Nova!

Նոր կեանք...

Մեր այս գրութիւնը կը մաղթենք որ չըլ-
լայ միայն յոյս և խրախոյս, այլ կոչնակ
պարտաւանաչութեան, յորդոր յառաջադի-
մութեան, մարակ անաւարտելիութեան:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՅՕԳՈՒԱՄ ԱՌԱՋԻՆ

ԱՅ Ս տարի Մոսկվայի կայսերական
Հնագիտական ընկերութիւնը լոյս ընծայեց
հետեւեալ երկու աշխատութիւնները՝

ш. Древности. Шруды Император-
скаго Московскаго Археологическаго О-
бщества, издаваемые подъ редакціей В.
Шрутовскаго, секретаря Общества.

ПОМЪ XVIII. МОСКВА 1901 г. այն է՝
Հնութիւնք. Մոսկվայի կայսերական Հնա-
գիտական ընկերութեան երկերը, հրատա-
րականաճ ընկերութեան քարտուղար Վ. Տրու-
տովսկու խնրագործութեամբ, հատոր XVIII-դ.
Մոսկուա 1901 թ.: Այս քառածալ գիրքը
բաղկացած է 311 էջից և բովանդակում է
իւր մէջ Հինգ յօդուածներ զանազան հնա-
խօսական նիւթերի մասին. ապա հետեւում
են ընկերութեան 1896-1899 թ. գործունէու-
թեան վերաբերեալ արձանագրութիւններ:
Դոցա մէջ Հայկական Հնութիւնների բաժնի-
նը չափազանց սուղ է. այն էլ 10. Յովհաննի-
սեանի մի յօդուածն է, որ Հեղինակը նկա-
րագրում է Քիչնեվի Հայոց առաջնորդարա-
նի տաճնադպիր՝ Կարապետ Յովհաննիսեանի
չորս Հին Հայոց ձեռագիրները, որոնց երեքը
Աւետարաններ են, իսկ չորրորդը — խորհրդ-
գատար: Ահա այդ նկարագրութիւնը:

ա. Աւետարան բողոքագիր, թղթի վրայ,
երկու սիւնեակ. թերթերի թիւն է 330, 25 ×
18 և ամեն մի էջը բաղկացած է 18 տո-
ղերից. ձեռագրիս սկզբում չըլանակների մէջ
Եւսեբիոսի կանոններն են, նոցանից բարձր
— ժողովոյ նկարներ. իսկ երկու կողմից —
կաքաներ. ապա հետեւում են զարդարուն
սիւններ ամաններով և պտպտա թռչունների
ու զազունների նկարներ: Աւետարանիչների
մանրանկարները պակասում են, խորանները
սովորական սեռով են. մանր զարդարանքնե-
րի մէջ երբեմն պատահում են յաւերժա-
հարսունք սրածայր գլխարկներով, խազիր,
խորանարդ աշտարակներ: Բոլոր զարդերը ու
նկարները միայն գծարուած են, բայց ոչ
բոլորովին նկարուած. ուստի տեղիք են տա-
լիս ենթադրելու, թէ բուն գրչագիրը ՃՄԳ
դարու գործ պիտի լինի (յիշեալ դարում, ինչ-
պէս յայտնի է, Հայաստանը յարատեւ. պա-
տերազմների սաղարէզ դր դարձել երկու
թուրքմէն՝ այն է՝ Ալ-Քոյունլու և Կարա-
Քոյունլու ցեղերի երեսից): Ձեռագրի վեր-
ջում կայ մի կարճատեւ յիշատակարան, որից
երեւում է, որ աւետարանն նորոգուած է և
կազմուած Հայոց ՌձԶ թուականին (1657 թ.):
բ. Աւետարան բողոքագիր, երկու սիւնակ,
բաղկացած 282 թերթերից (թուղթ), 18 ×
13 և իւրաքանչիւր էջը — 23 տողից: Աւե-